Իր հերթին պրն Սյու Ցզյալուն շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին չին ժողովրդին ուղղված բարեմաղթանքների համար՝ կարևորելով դարերի ավանդույթներ ունեցող Հայաստան երկրի հետ համագործակցության և բարեկամության առավել ամրապնդումը: Պրն Սյու Ցզյալուն վստահություն հայտնեց, որ այս այցը դրականորեն կնպաստի երկու երկրների միջև հետագա գործակցության զարգացմանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում այլ կրոնների նկատմամբ հարգուրժողականության ու հարգանքի, կրոնական խաղաղ համակեցության մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԻԳԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Պետդումայի պատգամավոր, Մարդկային արժանապատվության և անվտանգության պաշտպանության միջազգային լիգայի նախագահ, բանակի գեներալ Վալենտին Վարեննիկովի գլխավորած պատվիրակությանը՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի և ՀՀ վարչապետի խորհրդական Ֆադեյ Սարգսյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց Մարդկային արժանապատվության և անվտանգության պաշտպանության միջազգային լիգայի նախագահի գլխավորած պատվիրակության այցը Մայր Աթոռ՝ շնորհավորելով Հայաստանում Մարդկային արժանապատվության և անվտանգության պաշտպանության ազգային լիգայի հիմնման առիթով: «*Ուրախ ենք, որ այսօր ավելանում է մեր համախոհների թիվը, ովքեր նաև մտահոգվում են ներկա կյանքի մարտահրավերներով. մարտահրավերներ, որ առավել չափով վտանգում են մարդկային կյանքում հոգևոր և բարոյական արժեքները, որոնցով իրապես պայմանավորված են մարդու երջանկությունը, խաղաղ ու արժանապատիվ կյանքը*»,- նշեց Վեհափառ Հայրապետը՝ բարի արդյունավորում մաղթելով միջազգային և ազգային լիգաների առաքելությանը:

Պրն Վարեննիկովն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար և Նորին Սրբությանը ներկայացրեց Մարդկային արժանապատվության և անվտանգության պաշտպանության միջազգային լիգայի գործունեությունը և ծրագրերը՝ վստահություն հայտնելով, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ևս կսատարի ազգային լիգային նրա գործունեության մեջ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՇՎԵԴԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հոկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրա-